աղբիւրներից հաղորդում են, որ Չինական Կարմիր Խաչի խմբին, որը ուղարկած էր դէպի Գէկին, կարգրված է Զուդինինի կողմից վերադառնալ Խանկու։ Ամէն ինչ ցոյց է տալիս, որ պատերազմական գործողութիւնները շուտով կը վերսկսուին։

Ուրգա՝ Մոնգոլիայում ամէն տեղ կատարւում են հանդիսաւոր արարողութիւններ ի պատիւ Ցանգարտեխ ասուտածութեան, որի ժամանակ փառաբանւում էր Մուտուխտան։ Գահակալութեան օրին պատրաստւում է հրովարտակ իշխաններին և պաշտօնեաներին պարգևատրելու և մեղաւորների պատիժը թեթևացնելու և մինչև մահապատիժ վերցնելու համար։ Մուտուխտանի գահ բարձրանալու օրը հրամայած է կատարել հանդիսաւոր մաղթանքներ և պատ պահել։ Արգելած է կենդանիներ մորթել։ Թագադրութիւնը կը կատարւի հին ձեւով պալատին կից յատկապէս շինած գահաւոր իւրայում, առաջ օտարականների պաշտօնական ներկայութեան։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

(Թերթերից)

ԼՈՒՅԴ-ՋՈՐՋ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ

Լօնդոն։ Լոյդ-Ջորջ և Գրէյը ճառատցին առաջադէմ կանանց միութեան ժողովում յօգուտ կանանց ընտրողական իրաւունք տալու մասին։ Երբ որ մինիստրները հեռանում էին ժողովից, մի մարդ—կանանց ընտրողական իրաւունք տալու կողմնակից, Լլոյդ-Ջորջի վրայ գցեց մի թիթեղեայ արկղիկ, որը դիպաւ մինիստրի երեսին պատռեց շրթունքը և վիրաւորեց ձախ աչքը այնպէս լուրջ, որ Լլոյդ-Ջորջը համարեա զրկւեց աչքից։ Ցանցագործութեան մէջ կասկածւողը ձերբակալած է։

ՎԻՆՏԵԼՄ ԿՈՅՍՐԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՆ

Ինչպէս հաղորդում է «Temps», Վիլհելմ կայսրը Բաղդադի երկաթուղու մասին զեկուցում լսելուց յետոյ Deutsche Bank-ի դիրեկտոր Դէնիերից՝ յայտնեց ժողովին ներկայ եղող Թիւրքական դիպլոմատին, որ նա շատ ուրախ կլիներ, եթէ Թիւրքիայի և Իտալիայի մէջ պատերազմը վերջնաբար կայսրը, ի միջի այլոց, իր ցաւը յայտնեց լրագիրներում տպած Թիւրքիայի ծովային մինիստր Մուխտար փաշայի յայտարարութիւնը այն մասին, թէ Թիւրքիան չպէտք է յոյսը դնի Գերմանիայի վրայ։ Կայսրը աւելացրեց որ նա շուտով ուրիշ կունենայ ցոյց տալ Թիւրքիային, թէ որքան նա կարող է ազդեցութիւն ունենալ Գերմանիայի կողմից։

Կայսր Վիլհելմի այդ յայտարարութեան առթիւ Մուխտար փաշան Վիլհելմի մի հրաւարակախօսի ասաց, որ եթէ Վիլհելմի խօսակցութիւնը Թիւրքական դիպլոմատի հետ ուղիղ է, կայսրի այդ նոր համակրութիւնը դէպի Թիւրքիան բոլոր Թիւրք ժողովրդի մէջ կը գտնի ուրախութեան արձագանգը։ Թիւրքիայի ցանկութիւնը սերտ կերպով կապել մի որևէ քաղաքական խմբի հետ անհրաժեշտութիւն է դարձել։ Եւ եթէ Թիւրքիայի հին բարեկամ Գերմանիան ձեռք կարկառի, ոչ մի կասկած չկայ, որ Թիւրքիան ուրախութեամբ կը բռնի այդ ձեռքը։

ՄԵՐ ՏՕՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Ամսոյ 8-ին Բաքի Կուլտուրական Միութեան գրական սեկցիայի հրաւէրով Մարգարեական ընկերութեան դահլիճում մի ժողով է գումարել հայերից, որին սակայն, դժբախտաբար, հնարաւորութիւն չեմ ունեցել ներկայ գտնուելու։ Այդ ժողովը քննել է այն հարցը, թէ ինչպէս կատարի Բաքուն հայկական տպագրութեան 400-ամեակը առաջիկայ 1912 թուին։

Ժողովը բաժանւել է երկու մասի կամ երկու կարծիքի։ Մէկին ասել է՝ չհամանափակենք այդ տօնակատարութիւնը մի թաւալ, այլ աշխատենք համաձայնութեան մէջ մտնելու թիֆլիսի հասարակութեան և առհասարակ Կովկասի միւս հայ հասարակական և բարեգործական ընկերութիւնների հետ՝ տօնակատարութեան միակերպ եղանակ ու ձև ընդունելու, տօնին հանդէս ու մի ազգային նշանակութիւն տալու։ Այդ առթիւ որևէ թեղեր կազմելու համար։ Իսկ միւսը՝ Կուլտուրական Միութեան ներկայացուցիչների հետ միասին՝ սկզբունքով ընդունելով այդ առաջարկութիւնը, բայց դիտակցելով դրա իրագործման դժուարութիւնները, որոնք կարող են խանգարել և Միութեան ցանկութիւնը՝ առաջարկել են անմիջապէս ձեռնարկել գործի։ Եւ վերջին կարծիքը ձայների մեծամասնութիւն կազմելով՝ ունեցել է գերակշռող նշանակութիւն—ժողովը ընտրել է յօբելեանական հանդէսի համար մի յանձնաժողով, որի մէջ մտնում են Ներսէս վարդապետ, տիկիններ՝ Ադամեան, Գասպարեան և Տիգրանեան և պարոններ՝ Ղազարեան, Զաւարեան, Կոստանեան, Հովհաննէս, Գալեան և Մարգսեան։ Ընդ ամէն և որոշել է հրատարակել այդ առթիւ մի բրոշիւր ու ձրի տարածել հայ հասարակութեան մէջ՝ ծանօթացնելու նրան հայկական տպագրութեան 400-ամեակի և այդ տօնի նշանակութեան հետ։

Մենք գովելով հանդերձ Բաքւի Կուլտուրական Միութեան եռանդուն քայլը, որ չէ զլանում յետ մնալ հայկական ամէն մի նշանաւոր երևոյթի նախաձեռնութեան առաջնութիւնից, չենք կարող սակայն չյայտնել մեր ցաւը, որ Միութիւնը այդ նշանաւոր համազգային տօնին կամենում է տալ իւրաքանչիւր անձնական թիւն և բնականաբար մի սահմանափակ տօնակատարութեամբ։

Հայկական տպագրութեան 400-ամեակը մի երկրի, մի շրջանի պատմական մի նշանակալից երևոյթ չէ, մի գրողի կամ բազմամեայ հասարակական գործչի մի յօբելեան, որ նրանց վերցնեն ու տեղական նշանակութիւն տան և ուրիշներն արձագանք տան ինչով կամենան։ Հայկական տպագրութիւնը համազգային պատմութեան մի նշանաւոր ակտ է, որին և պէտք է համազգային նշանակութիւն տալ։ Նրա ծրագիրը պէտք է լինի միաժամանակ, նրա յաջողացումը մի օրինակ, նրա գաղափարը միաձոյլ։ Ամենաչաղաւ ամէն մի անհատ, ամէն մի հասարակական կազմակերպութիւն, միայն արտայայտիչը կարող է լինել իր ցանկութեան, իսկ բոլոր այդ ցանկութիւնների ժողովրդականացնողը պէտք է լինի, մեր խորին համոզմունքով, ամենայն հայոց կաթողիկոսը։

Հայկական տպագրութիւնը հայ լեզուի ամենաառաջին մեքենան է, որ դարեր շարունակ պտտել է նրան, խօսացրել է, անմեռ պահել և պիտի պահէ՝ որքան ժամանակ գոյութիւն կունենայ այդ լեզուն։

Նրա հետ կապած է ամբողջ հայութիւնը իր գրքով, գրականութեամբ, գպրոցով, եկեղեցով, թատրոնով, լրագրութեամբ և այլ և այլն։

Արդ՝ հարկաւոր է այդպիսի մի տօնին աւելի պատկառանքով վերաբերուել, աւելի վեհ նշանակութիւն տալ, աւելի համայնացնել, թէ պատահական մի ժողովով, երկրի մի անկիւնում, նրա յօբելեանի ծրագիրը կազմել։

Գոնէ աւելի գնահատելի է եղել Բաքւի ժողովում առաջին հոսանքի կարծիքը, որին չգիտենք ինչու հաւանութիւն չի տուել Կ. Միութիւնը։

Եւ մի նշանաւոր գործով յաւերժացնելու համար այդ տօնը՝ մենք կառաջարկէինք օգուտ թիւրքահայ պատգամաւորների ներկայութիւնից և նրանց վերադարձին Թիֆլիզում մի ժողով գումարել մաքերի փոխանակութիւն կազմելու և մի մտաւոր եռանկացութեան յանգելու, թէ ինչպէս, ինչ եղանակով վարել և կատարել այդ տօնը և ինչով յաւերժացնել։

Ի դէպ՝ մենք առաջարկել էինք «Հորիզոն»-ում այս առթիւ գրած մեր մի յօդուածով պարտականութիւն դնել կենդրոնական մի յանձնաժողովի վրայ, որ հայ տպագիր տառերով այս 400 տարեայ ընթացքում խմբուած աշխարհի լոյս տեսած բոլոր գրքերի, մատենագրութիւնների, պատմութիւնների, հրատարակիչ ամփոփած մի գրքում, թւական կարգով և ամէն մի տպագրածի ընդգիր ու բովանդակութիւնը տայով։

Ուշ կը լինէր, ճիշտ է, այժ ու ժամանակ կը պահանջէր, բայց նշանաւոր գործ կը լինէր—համաշխարհային գրականութեան մէջ պատկառելի տեղ գրաւող գործ...

Մխսաար

Մեզ հեռագրում են Էջմիածնից, որ համազգային պատգամաւորական ժողովի տեղապահ երդուեալ հաւատարմատար պ. Ս. Յարութիւնեանը հետեւեալ հեռագիրն է ստացել Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովից։

«Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում պատգամաւորական ժողովի անդամներին նրանց արտայայտած զգացմունքների համար։ Շարունակ մեծ ուշադրութեամբ և անկեղծ համակրութեամբ կը վերաբերւեմ Բարձրագոյնս մեր խնամքին յանձնած Կովկասեան հայերի բարի ձեռնարկութիւններին։

Կոմս Վորոնցով